



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

31.01.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/03**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ)՝ քննելով «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի 12.01.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/03 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 12.01.2018թ. խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 14-ին ժամը 10:00-ին կայացած նիստում կայացվել է որոշում այն մասին, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նորակ» ՍՊԸ-ն, իսկ երկրորդ տեղ՝ «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 25-ին ժամը 10:00-ին կայացած նիստում կայացվել է որոշում այն մասին, որ «Նորակ» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները գնահատվում է անբավարար, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և Ընթացակարգը համարվում է չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն (պայմանագիր չի կնքվում):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 47-րդ և 48-րդ կետերի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չչտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին, տվյալ դեպքում՝ «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ին:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր նշվել է հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ընկերությունը ներկայացված բողոքով խորհրդին խնդրել է՝

1. Կասեցնել «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը, այդ թվում նաև պայմանագրի կնքման գործընթացը՝ գնման այլ ընթացակարգի կիրառմամբ, մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման ընդունումը:

2. Դադարեցնել «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 25.12.2017թ. թիվ 3 արձանագրությամբ «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

«ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 17.01.2018թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը::

2. ՀՀ Բերքանուշ համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Ի պատասխան Խորհրդի 15.01.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/337-18 գրության՝ ՀՀ Բերքանուշի համայնքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) 18.01.2018թ. թիվ 5 գրությամբ Խորհրդին հայտնել է, որ Արարատի մարզի Բերքանուշի համայնքապետարանի կարիքների համար Բերքանուշ համայնքի փողոցների բարեկարգում՝ գիշերային լուսավորության մոնտաժային աշխատանքների ձեռքբերման նպատակով «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, որի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ Ընթացակարգի գնահատման արդյունքում առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նորակ» ՍՊԸ-ն: Կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն՝ հարցում է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե: Հարցման հիման վրա սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Նորակ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային պարտավորություններ՝ 20 834 405 ՀՀ դրամ:

Գնահատող հանձնաժողովի 24.12.2017թ. թիվ 3 որոշմամբ Ընթացակարգը հայտարարվել է չկայացած, քանի որ հայտնի է դարձել, որ սպասվելիք ֆինանսական մուտքերը, վերը նշված աշխատանքների համար, չեն հատկացվելու:

ՀՀ Բերքանուշի համայնքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 17.01.2018թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Բերքանուշի համայնքապետարանի կարիքների համար՝ Արարատի մարզի Բերքանուշ համայնքի փողոցների բարեկարգում՝ գիշերային լուսավորության մոնտաժային աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգը կազմակերպվել է հիմք ընդունելով ՀՀ Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջները:

3. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

- «Բիգ Էներգո» ԲԲԸ
- «ԱրտՊլաս» ՍՊԸ
- «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ
- «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ
- «ԳՈՑ» ՍՊԸ
- «Էրգիր» ԲԲԸ
- «Նորակ» ՍՊԸ

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.12.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով արձանագրել է, որ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

5. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովի կողմից 1-ին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նորակ» ՍՊԸ-ն, 2-րդ տեղը՝ «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն, 3-րդ տեղը՝ «ԳՈՑ» ՍՊԸ-ն և 4-րդ տեղը՝ «Բիգ Էներգո» ԲԲԸ-ն:

6. Նույն արձանագրության 6-րդ կետով կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը որոշել է «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվելիք՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման և եզրակացության ներկայացման օրը, ոչ ուշ քան երրորդ աշխատանքային օրվան հաջորդող օրը ժամը 10:00-ն:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.12.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետի պահանջները, որոշել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Նորակ» ՍՊԸ-ի, որակավորման չափանիշները գնահատել անբավարար, քանի որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող

ելամուտների գծով ունի Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

8. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել է չկայացած համաձայն՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (պայմանագիր չի կնքվում):

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի 12.01.2018թ. բողոքը և ՀՀ Բերքանուշի համայնքապետարանի 18.01.2018թ. թիվ 5 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

«Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: **Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝** անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

- 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
- 2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.
- 3) ոչ մի հայտ չի ներկայացվել.
- 4) պայմանագիր չի կնքվում:

Այսպես, ՀՀ Բերքանուշի համայնքապետարանի կարիքների համար՝ Արարատի մարզի Բերքանուշ համայնքի փողոցների բարեկարգում՝ գիշերային լուսավորության մոնտաժային աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջների:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել թվով 7 մասնակիցներ՝ «Բիգ Էներգո» ԲԲԸ-ն, «ԱրտՊլաս» ՍՊԸ-ն, «ԱՐԳՈՎՇԻՆ» ՍՊԸ-ն, «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն, «ԳՈՑ» ՍՊԸ-ն, «Էրգիր» ԲԲԸ-ն և «Նորակ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.12.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով արձանագրել է, որ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովի կողմից 1-ին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Նորակ» ՍՊԸ-ն, 2-րդ տեղը՝ «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն, 3-րդ տեղը՝ «ԳՈՑ» ՍՊԸ-ն և 4-րդ տեղը՝ «Բիգ Էներգո» ԲԲԸ-ն:

Նույն արձանագրության 6-րդ կետով կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը որոշել է «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվելիք՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման և եզրակացության ներկայացման օրը, ոչ ուշ քան երրորդ աշխատանքային օրվան հաջորդող օրը ժամը 10:00-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.12.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետի պահանջները, որոշել է

առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Նորակ» ՍՊԸ-ի, որակավորման չափանիշները գնահատել անբավարար, քանի որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, որից հետո գնահատող հանձնաժողովը «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել է չկայացած համաձայն՝ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (պայմանագիր չի կնքվում):

Ելնելով վերոգրյալ փաստերից և փաստական հանգամանքներից՝ Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը (տվյալ դեպքում «Նորակ» ՍՊԸ-ի) անբավարար գնահատելուց հետո պայմանագիր չկնքելու հիմքով Ընթացակարգը հայտարարել է չկայացած, մինչդեռ՝

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ նման պայմաններում Պատվիրատուն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (պայմանագիր չի կնքվում) համաձայն՝ Ընթացակարգը չկայացած հայտարարելով խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջը, քանի որ համաձայն վերը նշված հոդվածի՝ Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը անբավարար գնահատելուց հետո փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ տվյալ դեպքում «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ին:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի 18.01.2018թ. թիվ 5 գրությամբ ներկայացված այն պնդմանը, որ Ընթացակարգը չկայացած է հայտարարվել, քանի որ ֆինանսական միջոցներ չեն տրամադրվել, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

«Ը Բերքանուշի համայնքապետարանի կարիքների համար «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջների:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Վերոգրյալով պայմանավորված՝ Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջը:

Այսպիսով Խորհուրդը գտնում է, որ «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 12.01.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝

Պարտավորեցնել «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 25.12.2017թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ «ԱՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ